


Հարություն Վերսիշյան

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Մերի համայնքի պատկերացումները
տարածաշրջանային տրանսպորտային
ենթակառուցվածքների վերաբացման
վերաբերյալ



ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Մեղրի համայնքի պատկերացումները
տարածաշրջանային տրանսպորտային
ենթակառուցվածքների վերաբացման
վերաբերյալ

Համառոտագիր

Մեղրու տարածաշրջանով տրանսպորտային ուղիների վերաբացման շուրջ լոկալ խոսույթի դուրս բերման նպատակով իրականացվել են ֆոկլուս խմբային քննարկումներ տեղի բնակիչների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և բիզնեսի ներկայացուցիչների շրջանում:

Հարություն Վերմիշյան
harutyunvermishyan@ysu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
Հիմնախնդրի ներկայացում.....	4
Հետազոտական հարցեր.....	4
Մեթոդաբանությունը.....	4
Հետազոտության սահմանափակումները.....	6
Հիմնական բացահայտումները.....	8
Տարածաշրջանային համատեքստն ու լոկալ անհանգստությունները.....	8
Ընդհանուր վերլուծություն.....	8
Տարածաշրջանային տարբերություններ.....	9
Տարբերություններ ըստ սեռի.....	10
Տարբերություններ ըստ տարիքի.....	11
ՔՀԿ և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների հեռանկարները.....	11
Բիզնեսի ներկայացուցիչների անդրադարձը.....	12
Ամփոփում.....	13
Տրանսպորտային ուղիների վերաբացման ակնկալիքները.....	14
Ընդհանուր վերլուծություն.....	14
Տարբերություններ ըստ սեռի.....	17
Տարբերություններ ըստ տարիքի.....	17
ՔՀԿ և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների հեռանկարները.....	18
Բիզնեսի ներկայացուցիչների անդրադարձը.....	19
Ամփոփում.....	19
Սոցիալ-տնտեսական ազդեցությունը.....	21
Ընդհանուր վերլուծություն.....	21
Տարածաշրջանային տարբերություններ.....	22
Տարբերություններ ըստ սեռի.....	23

Տարբերություններ ըստ տարիքի.....	24
ՔՀԿ և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների հեռանկարները	24
Բիզնեսի ներկայացուցիչների անդրադարձը.....	25
Ամփոփում	25
Միջանձնային փոխհարաբերությունները. հայ-ադրբեջանական համատեքստը.....	27
Ընդհանուր վերլուծություն	27
Տարբերություններ ըստ սեռի	29
Տարբերություններ ըստ տարիքի.....	30
ՔՀԿ և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների հեռանկարները	30
Բիզնեսի ներկայացուցիչների անդրադարձը.....	30
Ամփոփում	31
Անվտանգության մտահոգությունները և մշակութային ազդեցությունները	32
Ընդհանուր վերլուծություն	32
Տարբերություններ ըստ տարածաշրջանի, սեռի և տարիքի.....	34
ՔՀԿ և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների հեռանկարները	35
Բիզնեսի ներկայացուցիչների անդրադարձը.....	36
Ամփոփում	36
Մեղրիի դերը տարածաշրջանային զարգացման համատեքստում.....	38
Ընդհանուր վերլուծություն	38
Ներուժը որպես տարածաշրջանային առևտրի հանգույց	38
Հակասական տեսակետներ և պայմաններ	41
Ցանկալի փոփոխություններ և ապագա հեռանկար.....	41
Ամփոփում	42
Եզրափակիչ անդրադարձ	43
Մեղրեցիների ուղերձը քաղաքականություն մշակողներին	43
Մշտական անվստահություն և տեղեկատվական բացեր	44

Ամփոփում	44
Ընդլայնված քննարկում	46
Եզրակացություն	49
Առաջարկություններ	49
Օգտագործված գրականության ցանկ	54
Հավելված.....	56
Հավելված 1. Ֆոկուս խմբային քննարկման ուղեցույց.....	56
Հավելված 2. ՖԽՔ մասնակիցների բաշխումն ըստ խմբերի.....	62

Ներածություն

Հիմնախնդրի ներկայացում

Վերջին տարիների աշխարհաքաղաքական տեղաշարժերը Հարավային Կովկասում, հատկապես 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի պատերազմի հետևանքով, վերսկսել են տարածաշրջանային կապերի և տրանսպորտային ցանցերի վերաբացման քննարկումները: Այն իրապես բարդ և բազմաբովանդակ խնդիր է՝ իր գլոբալ-աշխարհաքաղաքական և լոկալ առումներով (Chernyavskiy, 2021; Hayrapetyan, 2022; Iskandaryan, 2022; Meister, 2021; Poghosyan, 2023): Սակայն քաղաքական օրակարգը զուտ վերնից ներքև հասկացվող գործնառիչ չէ, այն միշտ առերեսում է լոկալ սպասումներին, տեղական տրամադրություններին, ինքնությանը և առօրեականությանը (Suffla et al., 2020; Tilly, 2002): Այս առումով առանցքային դիրք է զբաղում Հայաստանի Մեղրի համայնքը, որը գտնվում է Ադրբեջանին, Իրանին և Թուրքիայի սահմանակից կրիտիկական հանգույցում: Աշխարհագրական այս տարածությունը իր ֆիզիկական, սոցիալական և սիմվոլիկ չափումներով (Lefebvre, 1991; Schmidt & Németh, 2010) «մեծ» շահերի, խորը պատմական հիշողության և մարդու կենսականության խնդիրների կիզակետն է:

Հետազոտական հարցեր

- Որո՞նք են Մեղրի համայնքի բնակիչների առաջնահերթ ակնկալիքները մարզային տրանսպորտային և կապի ուղիների վերաբացման հետ կապված:
- Ինչպե՞ս են համայնքի անդամներն ընկալում Ադրբեջանին, Իրանին և Թուրքիային:
- Ինչպիսի՞ն են սպասումները տրանսպորտային ուղիների հնարավոր վերաբացումից՝ տնտեսական, սոցիալ-մշակութային և քաղաքական-անվտանգային ազդեցությունների առումով:
- Ինչպիսի՞ն են ապագայի վերաբերյալ պատկերացումներն ու որքանո՞վ է Մեղրին ընկալվում՝ որպես տարածաշրջանային առևտրի և զարգացման հանգույց:

Մեթոդաբանությունը

Առաջնային տվյալների կհավաքագրվեն ֆոկլուս խմբային քննարկումների միջոցով՝ ներգրավելով Մեղրի համայնքի ներկայացուցիչներին՝ տարբերակելով առավել

նշանակալի չափանիշները, ինչպիսիք են սեռը (արական/իգական), տարիքը (մինչև 40 տարեկաններ՝ հետխորհրդային սերունդ, 41 և ավելի տարեկաններ՝ խորհրդային սերունդ), տարածաշրջանը (Մեղրի/Ագարակ): Ինչպես նաև տեղական սուբյեկտայնության առումով թիրախային են տեղական բիզնեսի ներկայացուցիչները, տարածքային ինքնակառավարման մարմիններն ու քաղաքացիական հասարակությունը:

Այս քննարկումները հնարավորություն կտան վերհանել Մեղրիի համայնքի ներկայացուցիչների մտքերը, համոզմունքները մտահոգությունները՝ խմբային երկխոսության համատեքստում:

Այսպիսով, իրականացվել են 10 ֆոկլուս խմբային քննարկումներ հետևյալ չափանիշներով (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Տարածաշրջանը	տարիքը	սեռը	քանակը
Մեղրի քաղաք և հարակից գյուղեր	18-40	արական	1
		իգական	1
	41 և ավելի	արական	1
		իգական	1
Ագարակ քաղաք և հարակից գյուղեր	18-40	արական	1
		իգական	1
	41 և ավելի	արական	1
		իգական	1
Տեղական բիզնեսի ներկայացուցիչներ			1
Տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ			1

Հետազոտության նպատակին հասնելու և հետազոտական հարցերին պատասխանելու համար առանձնացվել են ֆոկլուս խմբային քննարկումների հետևյալ թեմաները՝

- Տարածաշրջանային համատեքստն ու լոկալ անհանգստությունները
- Տրանսպորտային ուղիների վերաբացման ակնկալիքները
- Սոցիալ-տնտեսական ազդեցությունը
- Միջանձնային փոխհարաբերությունները. հայ-ադրբեջանական համատեքստը
- Անվտանգության մտահոգությունները և մշակութային ազդեցությունները
- Մեդրիի դերը տարածաշրջանային զարգացման համատեքստում

Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում կիրառվել է անանուն հարցման տեխնիկա՝ հնարավորություն տալով մասնակիցներին անկաշկանդ արտահայտվելու զգայուն հարցերի շուրջ (մանրամասները տե՛ս հավելված 1-ում):

Սույն հետազոտությունը հնարավորություն է տալիս հասկանալ համայնքի ակնկալիքներն ու մտահոգությունները՝ կապված տրանսպորտի նորացման և տարածաշրջանային վերաբացման հետ, ինչը կարևոր է թե՛ պետական քաղաքականության մշակման, թե՛ քաղաքացիական նախաձեռնությունների և թե՛ միջազգային աջակցության տեսանկյունից:

Հետազոտության սահմանափակումները

- Ընդհանուր առմամբ, տարածաշրջանային տրանսպորտային ենթակառուցվածքների վերաբացման վերաբերյալ քննարկումները մեծամասամբ թեմատիկ առումով զգայուն էին, քննարկումը հանգեցնում էր տրավմատիկ հիշողության արթնացմանը: Պատմականորեն ձևավորված միֆերը, լոկալ թեմատիկ տաբուները երբեմն խանգարում էին ազատ և անկաշկանդ քննարկումներին: Չնայած դրան ՖԽԲ մոդերատորների փորձառությունը, համայնքի անդամների կողմից վստահելի հավաքագրողների հետ աշխատանքը և զգայուն հարցերի շուրջ անանուն կարծիք հայտնելու հնարավորությունները հնարավորինս շտկել են իրավիճակը՝ քննարկման ընթացքում հնարավորություն ընձեռելով վերհանել խմբային ընդհանրական դիրքորոշումները:
- Թեմատիկ առումով առավել զգուշավոր էին արական սեռի ներկայացուցիչները: Մասնավորապես Մեդրի քաղաքի և հարակից գյուղերի 41 և ավելի տարիքի, և Ագարակ քաղաքի և հարակից գյուղերի 18-40 տարիքի խմբերի ներկայացուցիչները հրաժարվել են պատասխանել անանուն հարցումներին

(անանուն դիրքորոշում հայտնել են միայն 1-ին և 10-րդ հարցերի վերաբերյալ)՝
պատճառաբանելով, որ նման միանշանակ և կտրուկ պատասխանները կարող
են այլ մեկնաբանությունների տեղիք տալ՝ աշխատելով ի վնաս համայնքին:
Չնայած դրան երկու խմբերում էլ ծավալվել են կառուցողական սուր
քննարկումներ:

Հիմնական բացահայտումները

Տարածաշրջանային համատեքստն ու լոկալ անհանգստությունները

Ընդհանուր վերլուծություն


Խոսելով այն մասին, թե ինչպես են համայնքի վրա ազդել վերջին մի քանի տարիների ընթացքում Հարավային Կովկասում տեղի ունեցած փոփոխություններն ու զարգացումները՝ բոլոր ֆոկլուս խմբային քննարկումներն ուրվագծում է հիմնական թեման՝ **շարունակական անորոշությունը և հոգեբանական լարվածությունը, որը բխում է վերջին աշխարհաքաղաքական իրադարձություններից և հակամարտություններից**: Հատկապես անդրադարձ է արվում 2020 թվականի 44-օրյա պատերազմին և 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանմանը՝ նշելով, որ այս իրադարձությունների հետևանքները համատարած վախ են սերմանել **ապագայի անորոշության, սահմանների փոփոխության հավանականության կամ պատերազմի վերսկսման** վերաբերյալ: Անորոշության նարատիվը հատկապես ներկայացվում է ապագայի երկարաժամկետ պլանավորման համատեքստում. բնակիչները հաճախ դժկամություն են հայտնում վերանորոգել տները, ներդրումներ կատարել տեղական ձեռնարկություններում կամ զբաղվել գյուղատնտեսության բարելավմամբ: Միգրացիան, հատկապես դեպի Երևան, կարծես թե պայմանավորված է ինչպես անվտանգության նկատառումներով, այնպես էլ ավելի լավ տնտեսական հնարավորությունների կամ ավելի բարձր կենսամակարդակի և/կամ կայունության փնտրտուքով:

«Բոլորի մոտ վախ կա, որ Արցախից հետո հաջորդը լինելու է Մեղրին... Մեծ թվով ընտանիքներ տեղափոխվում են Երևան»: (Ագարակ, կին, 18-40)

«Կյանքը ոնց որ մինչև 2020 թիվն էր, ու դրանից հետո ամեն ինչ էնքան սովորական ա դարձել, ամեն ինչը շատ միապաղաղ ա դարձել, հիասթափություն կա, միապաղաղ վիճակ:» (Մեղրի, կին, 18-40)

Վերջին տարիների ազդեցիկ նշանակությունը տեսանելի է նաև անանուն հարցման աղյուսներում: Մասնավորապես ՖԽՔ մասնակիցների 76.2%-ը նշել է, որ այդ

իրադարձությունները նշանակալի կերպով ազդել են իրենց և համայնքի վրա (տե՛ս գծապատկեր 1):



Իհարկե, այստեղ պետք է նաև խոսել համայնքի յուրահատկության մասին: Հաշվի առնելով Մեղրի համայնքի յուրատեսակ աշխարհագրական դիրքն ու լոկալ ինքնությունը՝ բնակիչները առանձնանում են տեղի հետ կապվածության բարձր աստիճանով, համայնքային ուժեղ ինքնությամբ, ինչը մտածված քաղաքականության պարագայում հնարավորություն է խուսափելու նկատվող արտագաղթային միտումներից, վերականգնելու տեղին բնորոշ ինքնաբավ բնականոն առօրյան:

«Մինչև պատերազմը ես ձգտել եմ դեպի մեծ քաղաքներ, դեպի Երևան, բայց պատերազմի ժամանակ ամուսինս ասեց՝ քեզ տանում եմ Երևան, երեխաների հետ, էդ պահին հասկացա, որ չեմ ուզում... ծննդավայրի կորուստը ես զգացի, մինչև էդ ասում էի կգնամ»: (Մեղրի, կին, 18-40)

«Մեզ մոտ միշտ էլ ակտիվ ա եղել էտ առումով: Սյունիքի մարզը զբաղվածության աստիճանով բարձր ա: Պղնձամոլիբդենային գործարան ունենք, մաքսատունն ու Պարսկաստանի հետ սերտ առևտրային հարաբերությունների մեջ ենք: Միշտ ակտիվ ա եղել, էտ առումով բան չի փոխվել»: (Ագարակ, տղամարդ, 18-40)

«Ես կարամ ասեմ, որ մեղրեցիներն ունեն հատուկ բնորոշ կենսակերպ, իրենք արմատներով խորն են հողի մեջ: Գիտենք, որ ապագա չկա, բայց մեր տունը վերանորոգում ենք, ստեղծում ենք, մեր կենսակերպը ուրիշ ա: Ես եթե գիտեմ, որ վաղը վատ ա լինելու, ես միևնույնն ա չեմ թողնի, որ իմ ծառը չորանա, ես պետք ա ջրեմ»: (Մեղրի, կին, 41 և ավելի տարեկան)

Տարածաշրջանային տարբերություններ

Ազարակ քաղաքի և հարակից գյուղերի բնակիչները հատկապես կարևորում են համայնքի խոցելիությունը Երևանից հեռավորության պատճառով: Վախն ու անորոշությունն այստեղ ավելի ցայտուն են, մտահոգությունները կապված են ռուսական ռազմակայանի անորոշ ապագայի հետ (ընդ որում մեծամասամբ նկատելի է դրական տրամադրվածություն այս հարցում): «Հաջորդը կարող է լինել Մեղրին» թեզը հոգեբանական անհանգստության և արտագաղթի պատճառ է դառնում: Ընդ որում, հիմնական անհանգստությունները պայմանավորված են այս հարցում ՀՀ իշխանությունների, քաղաքական գործընթացների ոչ թափանցիկությամբ՝ բարձրաձայնելով հստակ տեղեկատվության կամ հավաստիացումների կարիքը:

Մեղրի քաղաքի և հարակից գյուղերի բնակիչների պարագայում ևս կենտրոնական է դրույթը, որ 2020 թվականից հետո տարածաշրջանը դարձել է սահմանամերձ գոտի և մտավախությունները պահպանվում են, սակայն այս հատվածի բնակիչներն առավել ընդգծում, որ փորձում են պահպանել առօրյա կյանքի բնականոնությունը՝ հաշվի առնելով, որ շարունակում են զարգանալ զբոսաշրջություն ու առևտուրը: Չնայած անորոշությունը խոչընդոտում է երկարաժամկետ ներդրումներին, սակայն շատ մեղրեցիներ ցուցաբերում են տոկունություն՝ պահպանելով հույսը, շարունակելով շինարարությունը և փնտրելով տնտեսական հնարավորություններ: Տրամադրությունները տարբեր են. մինչ ոմանք մտածում են հեռանալու մասին՝ անվտանգության նկատառումներից ելնելով, մյուսները վերագտել են իրենց ծննդավայրի հուզական նշանակությունը:

«Մարդիկ շարունակում են ապրել բնականոն հունով, տները վերանորոգում են... միշտ լավատես եմ, միշտ մտածում եմ, որ վերջում լավ է լինելու»: (Մեղրի, կին, 41+)

Տարբերություններ ըստ սեռի

Կանայք հաճախ ընդգծում են անորոշության և սթրեսի **հոգեբանական վնասը**: Նրանք խորապես գիտակցում են ընտանիքի կայունության վրա ունեցած ազդեցության մասին և չեն ցանկանում ներդրումներ կատարել տների բարելավման կամ նոր ձեռնարկումների մեջ: Անվտանգության մտահոգությունները և հուզական բարեկեցությունը կենտրոնական են նրանց պատումներում: Տղամարդիկ ընդունում են

անորոշությունը, բայց հաճախ այն համատեքստում են ավելի լայն աշխարհաքաղաքական կամ տնտեսական շրջանակներում: Թեև նաև մտահոգված են ապագայով, տղամարդիկ երբեմն նշում են ընթացիկ բիզնես գործունեությունը կամ հնարավոր ներդրումները: Նրանք ավելի հավանական է քննարկել կառուցվածքային փոփոխությունները, ինչպիսիք են առևտուրը, ենթակառուցվածքային նախագծերը կամ պետական քաղաքականությունները, որոնք ազդում են տեղական կյանքի վրա:

Տարբերություններ ըստ տարիքի

Առավել երիտասարդ մասնակիցները հաճախ ավելի մեծ անհանգստություն են հայտնում ապագայի վերաբերյալ և երկմտում երկարաժամկետ ծրագրեր կազմելու հարցում: Հակամարտությունները խաթարել են նրանց ձգտումները, և ոմանք մտածում են իրենց հայրենի տարածաշրջանն ամբողջությամբ լքելու մասին: Միաժամանակ, գոյություն ունի հակառակ միտումը, որտեղ պոտենցիալ կորուստը ուժեղացնում է նրանց կապվածությունը իրենց ծննդավայրին:

Առավել հասուն տարիքի և տարեց մասնակիցները, որոնք ապրել են նախկին սոցիալ-քաղաքական փոփոխություններով (օրինակ՝ խորհրդային ժամանակաշրջան, հետխորհրդային անցումներ), ներկա անորոշությունը ներկայացնում են պատմական համատեքստում: Նրանք հակված են պահպանել հույսը, շարունակել կենցաղային կամ գյուղատնտեսական բարելավումները և հավատում են վերջնական կայունացմանը, նույնիսկ եթե նրանք զգոն են:

«Եթե մարդը չգիտի, թե ոնց պլանավորի վաղվա իրա ապագան, անորոշությունը ամենավատ բանն ա... Մեղրիում բոլորի մոտ ա էտ անորոշությունը: անորոշությունն ամենավատ բանն է... Մեղրիում բոլորն են զգում այդ անորոշությունը»: (Մեղրի, տղամարդ, 41 և ավելի տարեկան)

ՔՀԿ և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների հեռանկարները

ՔՀԿ-ների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ առնչվող անձինք կարևորում են ինչպես տնտեսական ներուժի պահպանումը, այնպես էլ լոգիստիկ և տեղեկատվական բացերը, որոնք խոչընդոտում են համայնքի ճկունությանը:

Ընդունելով դժվարությունները, նրանք նաև նշում են դրական միտումներ, ինչպիսիք են մրգերի շուկայավարման բարելավումը և ավելի քիչ սահմանափակող բիզնես միջավայրը: Այնուամենայնիվ, այս ներկայացուցիչները ցավում են կենտրոնացված, հուսալի տեղեկատվության հոսքի և աջակցության համակարգերի բացակայության համար:

«Վերջին հինգ-վեց տարին ավելի լավ ա գները, մեղրեցին ավելի լավ ա իրացնում իրա ապրանքը... Բայց կարում են պակաս... մարդիկ չեն իմացել, թե չեն դիմեն»:

(ՔՀԿ և ՏԻՄ ներկայացուցիչներ)

Նրանք նաև նշում են ենթակառուցվածքային ծրագրերը (ինչպես Հյուսիս-Հարավ մայրուղին), որոնք հանգեցրել են ժամանակավոր բարգավաճման, բայց հողի փոխհատուցման և Երևան միգրացիայի վերաբերյալ հարցեր են առաջացրել: Ոմանք բարձրացնում են քաղաքացիական պաշտպանության ոչ բավարար կառույցների խնդիրը (օրինակ՝ ապաստարանների պակասը):

Բիզնեսի ներկայացուցիչների անդրադարձը

Բիզնեսի ներկայացուցիչներն ընդունում են, որ անորոշության մթնոլորտն ազդում է սպառողների և ներդրողների վարքագծի վրա: Թեև զբոսաշրջությունն ու առևտուրն աճել են՝ հաճախ տեսնելով նոր հյուրանոցների կամ գյուղատնտեսական ապրանքների արտահանման հնարավորությունների աճ, քաղաքական անկայունության, հակամարտությունների և սահմանների հնարավոր փոփոխությունների հետ կապված վախերը թուլացնում են երկարաժամկետ ներդրումային ռազմավարությունները:

«Եթե երկու օր հեռուստացույցով Մեդրի բառն ավելանում է, ես իմ առևտրի վրա էդ ազդեցությունն եմ զգում...»: **(Բիզնեսի ներկայացուցիչ)**

Որոշ ձեռնարկատերեր ցուցաբերել են տոկունություն՝ չնայած անորոշություններին, շարունակելով շինարարական ծրագրերն ու ներդրումները: Նոր նախագծերի առկայությունը (օրինակ՝ Հյուսիս-Հարավ մայրուղին և բարելավված առևտրային ուղիները) դիտվում են որպես «խառը օրինություն»՝ առաջարկելով տնտեսական ներուժ, բայց ուղեկցվում է մոտալուտ անկայունության հոգեբանական ծանրությամբ:

Ամփոփում

Ընդհանուր առմամբ, Ագարակի և Մեղրիի համայնքները բախվում են հատկապես անորոշության խնդրին, որն ազդում է հոգեբանական բարեկեցության, միգրացիայի ձևերի և տնտեսական որոշումների վրա: Կանայք շեշտում են ընտանեկան կայունությունը և հուզական սթրեսը, մինչդեռ տղամարդիկ հաճախ անորոշությունը դնում են ավելի մեծ կառուցվածքային համատեքստում: Երիտասարդ հարցվողներն առավել սուր են զգում իրենց ապագա պլանների խափանումները, մինչդեռ տարեց մասնակիցները ապավինում են պատմական հեռանկարին և համառոտ են դժբախտությունների դեմ: ՀԿ-ների, ՏԻՄ-ի և բիզնեսի ներկայացուցիչները կարևորում են ինչպես տնտեսական ազատականացման դրական կողմերը, այնպես էլ աշխարհաքաղաքական ռիսկերի և տեղեկատվության անբավարար տարածման հետևանքով առաջացած շարունակական սահմանափակումները:

Այս պատկերացումներն ընդգծում են տեղական իրողությունների բարդությունը. նույնիսկ այն ժամանակ, երբ տարածաշրջանը դիմակայում է անկայունությանը, բնակչության հատվածները և որոշ տնտեսական դերակատարներ ձգտում են հարմարվել, ներդրումներ կատարել և պահպանել հույսը: Այստեղ դիտարկելի է տրավմատիկ հիշողության, անոմիկ միջավայրի, բայց միաժամանակ ուժեղ լոկալ ինքնության, համայքային համերաշխության համաժամանակյա դրսևորումներ: «Ոչ պատերազմի, ոչ խաղաղության» ամբիվալենտությունը կենտրոնական է (Harutyunyan, 2016), և նպատակաուղղված ռազմավարության, քաղաքական որոշումների և երկխոսության խնդիրը առաջնային է:

Տրանսպորտային ուղիների վերաբացման ակնկալիքները

Ընդհանուր վերլուծություն


Տրանսպորտային ուղիների վերաբացման խնդրի քննարկումը գրեթե բոլոր դեպքերում սկսվում է հետևյալ հարցով՝ «Ո՞ր ճանապարհը: Հյուսիս-Հարավը»: Իրազեկումը, որ խոսքը նաև Ադրբեջանի-Նախիջևանի հետ կապի, խորհրդային տարիներին գործող տրանսպորտային ենթակառուցվածքների մասին է, փոխում է տրամադրությունը: Մասնավորապես այս հացի քննարկումը ծանր է եղել տղամարդկանց հետ քննարկումներում:

Անանուն հարցման արդյունքներին անդրադարձը լավագույնս նկարագրում է խնդիրը: Հարցը՝ «Կո՞ղմ եք Մեղրիով մարզային տրանսպորտային ուղիների վերաբացմանը», տրվել է երկու անգամ. հիմնական քննարկման մեկնարկին մասնակիցները անանուն կերպով ներկայացրել են իրենց դիրքորոշումը՝ առանց անդրադառնալու հարցման արդյունքներին, և նույն հարցը տրվել է քննարկման ամփոփիչ հատվածում, երբ հնարավոր բոլոր սցենարները քննարկված էին, յուրաքանչյուրն ուներ պատկերացում մյուսների դիրքորոշումների վերաբերյալ: Երկորդ դեպքում գործ ունենք խմբային դինամիկայի, առավել ընդհանրական համայնքային պատկերացումների հետ:

Մասնավորապես, բոլոր տասը ՖԽՔ ներկայացուցիչների 33.9%-ը մինչև քննարկումը կողմ է եղել մարզային տրանսպորտային ուղիների վերաբացմանը, դեմ է եղել 46.8%-ն ու այս հարցին դժվարացել է պատասխանել մասնակիցների 17.7%-ը: Հետաքրքիր է, որ քննարկումից հետո նույն հարցին պատասխանելիս եթե դեմ եղողների համամասնությունը շատ չի փոխվել (աճելով մինչև 50.0%), ապա բավականին աճել է անորոշության մեջ գտնվողների քանակն (աճելով մինչև 22.6%)՝ ի հաշիվ կողմ նշողների (նվազելով մինչև 25.8%) (տե՛ս գծապատկեր 2): Հարցի բարդությունը, ապագայի անորոշությունը, երկխոսության պակասը, տրանսպորտային ուղիների վերաբացման ռիսկերի գերակայությունը հնարավորությունների և թերությունների գերակայությունը առավելությունների նկատմամբ նպաստում են, որ նախ՝ մեծամասամբ բնակիչները դեմ են այս գործընթացներին, երկրորդ՝ համայնքային կարծիքի գերակայության պայմաններում նույնիսկ լավատեսական տրամադրություններն ավելի շուտ հակվում են վատատեսությանը:

Ընդ որում, հետաքրքիր են հարցի այլ չափումները: Մասնավորապես, կարելի է նկատել, որ

- Կանայք առավել կողմ են Մեղրիով մարզային տրանսպորտային ուղիների վերաբացմանը, քան տղամարդիկ, սակայն կանանց պարագայում քննարկումներից հետո անորոշությունն էլ առավել նկատելի է:
- Շատ հետաքրքիր է պատկերը բիզնես ներկայացուցիչների խմբում, երբ 1/3-ի նախնական տրամադրվածությունն այնպիսին էր, որ տրանսպորտային ուղիների վերաբացումը հնարավորություն է (37.5%-ը մինչև քննարկումը կողմ է քվերակել), սակայն քննարկման ընթացքում տնտեսական հնարավորությունների կողքին քաղաքական, անվտանգային ռիսկերի գիտակցումը հանգեցրեց նրան, որ մասնակիցների 1/4-ը դժվարացավ պատասխանել հարցին (տե՛ս գծապատկեր 2):
- Մի փոքր նման, բայց տարբերվող պատկեր է ՔՀԿ և ՏԻՄ ներկայացուցիչների խմբում: Նրանց միայն մեկ հոգի մինչև վերջ պնդեց, որ կողմ է, իսկ 62.5% պատասխանել դժվարացողների մեծամասնությունը քննարկման արդյունքում դեմ քվեարկեց այս գործընթացին (տե՛ս գծապատկեր 2):



Ընդհանուր առմամբ, այս պատկերը բնութագրական է նաև որակական քննարկումներին. կենտրոնական են անորոշության և անհանգստության խորը զգացում Հայաստանը հարևան երկրների, այդ թվում՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ կապող տրանսպորտային ուղիների վերաբացման վերաբերյալ: Թեև բավականին դրական են մոտեցումները տնտեսական հնարավորությունների շուրջ, ինչպիսիք են առևտուրը, զբոսաշրջությունը և ավելի արագ ճանապարհորդությունները, անվտանգության մտահոգությունները և վստահության խնդիրները գերակշռում են պատումներում: Ընդ որում, լոկալ խոսույթում հստակ ուրվագծվել է երկակի հնարորությունների շուրջ պատկերացումներ: Համընդհանուր պնդում կա Հայաստանի ինքնիշխանության և տեղի բնակիչների անվտանգության ապահովման առաջնահերթության վրա: Իշխանությունների նկատմամբ անվստահությունն ու անորոշ, անբավարար տեղեկատվությունը խորացնում են վախերն ու թերահավատությունը:

«Եթե անգամ թունել լինի, իրանք [ի նկատի ունի ադրբեջանցիները] թունելով անցնեն, իրանք մեկ ա իրանց սև գործը կարան անեն»: **(Ագարակ, կին, 18-40 տարեկան)**

«Գալու են, տները ծախեն թուրքերին ու դառնում ենք Բաթումի: Ես ոտնատակ տալը տենց եմ պատկերացնում, որ իրանք են լինելու ստեղ»։ **(Ագարակ, կին, 41 և ավելի տարեկան)**

«Ոչ մեկ չի ասում՝ ի՞նչ է նշանակում բացել: Գնացք ա գնալու՞, օդային ուղի ա՞... ոչինչ չի ասվում մեզ:» **(Մեղրի, արական, 18-40 տարեկան)**

Այստեղ տեղին է հետևյալ կարևոր դիտարկումը. եթե պատմականորեն Մեղրու տարածաշրջանի համար գրեթե միակ հնարավորությունը Երևանի և ՀՀ մյուս բնակավայրերի հետ կապի առումով եղել է Նախիջևանը, ապա ներկայից գործընթացները, մասնավորապես Հյուսիս-Հարավ մայրուղու ինտենսիվ շինարարությունը նոր սպասում է ձևավորել: Կենտրոնական է սպասումը, որ այսուհետ Երևանի և դեպի հյուսիս՝ Վրաստանի, հետ կապն առավել մատչելի կլինի, այս դեպքում ընդհանրապես էական չեն նախկին խորհրդային շրջանում գործող ճանապարհները՝ մասնավորապես Նախիջևանով դեպի Երևան գնացքի ճանապարհը:

«Հյուսիս-հարավ ճանապարհի գործարկումը բնականաբար... տնտեսական զարգացումը կսկսի զարգանալ»:

Հատկապես, Ագարակ քաղաքի և հարակից գյուղերի ներկայացուցիչները մտավախություն ունեն, որ տրանսպորտային ուղիները կարող են իրենց շրջանը վերածել խոցելի միջանցքի: Շատերը կարծում են, որ առանց Հայաստանի երաշխավորված վերահսկողության, երթուղիների վերաբացումը կարող է խաթարել տեղական անվտանգությունը և խթանել հետագա արտագաղթը:

«Մեր երկրի ներկայացուցիչը անպայման պետք է լինի սահմանին: ... Ինձ դուր չի գալիս, որ ռուսը իմ երկրի մեջ իմ անձնագիրը ստուգում ա»:

Տարբերություններ ըստ սեռի

Կին մասնակիցները հաճախ շեշտում են երթուղիների վերաբացման հոգեբանական և սոցիալական հետևանքները: Նրանք անհանգստանում են իրենց երեխաների անվտանգության, համայնքի բարոյական կառուցվածքի և նոր անորոշությունների մեջ ապրելու վախի համար:

«Աղջիկ երեխաներ ունենք, վաղը մյուս օրն ի՞նչ էմանաս, ի՞նչ ձևի մարդ մտավ: Մեղրին արդեն ապականվեց...»

Արական սեռի մասնակիցները հարցերն ավելի շատ շրջանակում են ռազմավարական շահերի, տնտեսական օգուտների և երկարաժամկետ պլանավորման տեսանկյունից: Այնուամենայնիվ, նրանք նույնպես գիտակցում են, որ առանց վստահության, վերահսկողության և անվտանգության հնարավոր ձեռքբերումներն անիմաստ են:

«Եթե կարողանանք լավ սպասարկենք [ի նկատի ունի ճանապարհի սպասարկումն ու անցակետերի հանդեպ վերահսկողությունը], դա մեր ազգի համար լավ կլինի... Բայց եթե չսպասենք, ի՞նչ իմաստ ունի»:

Տարբերություններ ըստ տարիքի

Ավելի երիտասարդ մասնակիցները երբեմն արտահայտում են բաց հաղորդակցության, ավելի քիչ սահմանափակումների և նոր երթուղիների հնարավոր

գլոբալ ինտեգրման ցանկություն: Այնուամենայնիվ, նրանք նույնպես հետ են մնում անորոշությունից և վախերից, որոնք բխում են վերջին հակամարտություններից:

«Ես, որպես երիտասարդ, հասկանում եմ, ես չեմ կարող ապրել... պետք է հարևանություն անենք, բայց պարտադրանքով չի ստացվի»:

Տարեց հարցվածները հիշում են խորհրդային շրջանի գնացքները և թերահավատորեն են մոտենում հնարավորություններին: Անցյալի վնասվածքները՝ առևանգումներ, կողոպուտներ, պայմանավորում են ներկայիս անվտանգությունն ու վախը՝ առանց անվտանգության երկաթյա երաշխիքների:

ՔՀԿ և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների հեռանկարները

ՀԿ-ների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները խնդիրը համարում են ոչ թե բացառապես տեղական, այլ ազգային շահերի հետ կապված: Նրանք ընդունում են պոտենցիալ տնտեսական օգուտները, եթե Հայաստանը կարողանա բանակցել համապատասխան պայմանների շուրջ և ստանալ տարանցման վճարներ, սակայն անորոշ են հստակ կառավարական հաղորդակցության և անվտանգության հուսալի շրջանակի բացակայության պատճառով: Անվտանգության պետական երաշխիքների բացակայության պայմաններում ձևավորվում է երկակի սպասում (երբեմն իրարամերժ)՝ կրկին հակադրելով շահն ու վտանգը.

«Բացվող ճանապարհի օգուտը միայն Ադրբեյջանի համար ա, որ իրանք կարանան շատ հեշտ հասնեն Նախիջևան, վերջ, մենք ոչ մի օգուտ չունենք:»

«Մենք անընդհատ խոսում ենք անցյալից, բայց էն ժամանակ ուրիշ պայմաններ ա եղել, մենք հիմա ունենք Հայաստանի Հանրապետություն... Էն ժամանակ չի եղել, եղել ա ԽՍՀՄ, ի՞նչ Հայաստան: Հայաստանի Հանրապետությունը, ըստ իրանց պայմանավորվածությունների, ես ոնց հասկանում եմ դրան ա տանում, որ թույլ ա տալիս իրա տարածքով, հիմա թե տրանզիտ ա վճարում, թե ինչով ա ես չգիտեմ, անցնում ա գնացքը, այդ թվում մենք կարանք անցնենք, բայց ինքը դրա համար վճարում ա մեր պետությանը: Հիմա եթե մենք էդտեղ վտանգ ենք տեսնում, մի արեք, բայց եթե մեզ ստիպում են... դա վատ ա, բայց եթե չեն

ստիպում, մեզ առաջարկում են գործարք, որ մեզ վճարում են, որ մենք ասում ենք մեր հողով տարեք Ձեր գնացքը, վճարեք, գնացեք, այ ուրիշ բան:»

Բիզնեսի ներկայացուցիչների անդրադարձը

Բիզնեսի ներկայացուցիչների մոտեցումները նույնական են ՔՀԿ և ՏԻՄ ներկայացուցիչների մոտեցումներին. նրանք ևս դիտարկում են պոտենցիալ տնտեսական դրական կողմերը, ինչպիսիք են առևտրի և զբոսաշրջության աճը: Այնուամենայնիվ, նրանք ևս զգուշանում են առանց կոնկրետ երաշխիքների սկսվող գործընթացից: Նրանք նշում են, որ երթուղու հաջող կառավարումը և սակագների նկատմամբ վերահսկողությունը կարող են բերել եկամուտ և զարգացում, սակայն մտավախություն ունեն, որ իրավիճակը կարող է ծառայել հիմնականում Ադրբեջանի շահերին:


«Եթե մենք ենք վերահսկելու, որ երկրին փող կվճարեն... ամեն ինչ լավ կլինի, թեկուզ տրանսպորտային կապը... անվտանգության հարցը»:

«Մենք չգիտենք ինչ ձև ա լինելու, գնացք ա լինելու, թե ավտո... պաշտոնական ստույգ ինֆորմացիա գոյություն չունի»:

Ամփոփում

Տրանսպորտային ուղիների վերաբացման շուրջ խոսակցությունը հղի է լարվածությամբ, անվստահությամբ և մրցակցող հույսերով: Մինչ ոմանք ենթադրում են տնտեսական աճ, բարելավված առևտուր և ավելի լավ կապ, ներթափանցման, բռնության և ինքնիշխանության կորստի վախը ստվերում է հնարավոր օգուտները: Մասնակիցները ցանկանում են պարզություն, ուժեղ պետական վերահսկողություն, անվտանգ պայմաններ և արդար բանակցություններ, պայմաններ, որոնց դեպքում նրանք կարող են զգուշորեն ընդունել այս երթուղիները: Այս հավաստիացումների բացակայությունը թերահավատության և դիմադրության պատճառ է դառնում, ինչը ցույց է տալիս, թե որքան խորն է անվտանգության ու վստահության հանդեպ համայնքի արձագանքը: Ընդհանուր պատկերը լավագույնս ընդհանրացնում է զծապատկեր 3-ը, համաձայն որի ՖԽՔ մասնակիցների մեծամասնության (36.5%)

համար տրանսպորտային ուղիների վերաբացման վերաբերյալ ակնկալիքները «ոչ դրական են, ոչ բացասական»:



Սոցիալ-տնտեսական ազդեցությունը


Ընդհանուր վերլուծություն

Ֆոկուս խմբերում մասնակիցները մի շարք տեսակետներ են հայտնում տրանսպորտային ուղիների վերաբացման սոցիալ-տնտեսական հետևանքների վերաբերյալ: Թեև ոմանք տեսնում են պոտենցիալ տնտեսական օգուտներ՝ առևտրի ավելացում, ավելի էժան տրանսպորտային ծախսեր, զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտների զարգացում, այս դրական հեռանկարները շարունակաբար ստվերվում են անվտանգության, վստահության և ինքնիշխանության մասին մտահոգություններով:


Առանցքային լարվածություն է առաջանում. **տնտեսական լավատեսությունն ընդդեմ անվտանգության վախերի:** Նույնիսկ այն մասնակիցները, ովքեր ընդունում են, որ ճանապարհների վերաբացումը կարող է խթանել տեղական տնտեսությունները, ներգրավել նոր բիզնես հնարավորություններ և խթանել զբոսաշրջությունը, ընդգծում են, որ այդ պոտենցիալ ձեռքբերումները նշանակություն չունեն, եթե բնակչությունն իրեն ապահով չի զգալու կամ ենթադրյալ թշնամիների կողմից ներթափանցման և մշակութային գերակայության վտանգ է առաջանալու: Ընդ որում, անվտանգություն-հնարավորություն երկընտրանքում կենտրոնական է դառնում «անվտանգության» պատումը՝ նաև պայմանավորված լոկալ տնտեսության զարգացվածությամբ (առնվազն ընկալումների մակարդակում):

«Մեղրիում միակ խնդիրը աշխատողների պակասն է... Մեղրին միակ քաղաքն է, որն աշխատանքի խնդիր չունի»: (Մեղրի, իգական, 18-40)

Հարկ է նկատել, որ տրանսպորտային ուղիների վերաբացման ամենամեծ օգուտի մասին մտորելիս, առավել հաճախ ՖԽՔ մասնակիցները դժվարանում են մատնանշել օգուտը (30.0%, տե՛ս գծապատկեր 4). այստեղ ևս կենտրոնական է անորոշությունն առ սցենարների հնարավոր զարգացումը: Մյուս մասնակիցների 20.0%-ը նշել են տնտեսական զարգացումը, 22.0%-ը՝ տեղաշարժի հնարավորությունների աճը, 18.0%-ը՝ տարածաշրջանային հարաբերությունների բարելավումն ու 10.0%-ը՝ առևտրի հնարավորությունների բարելավումը:



Ընդ որում, սպասումը, որ երթուղիների վերաբացումը էապես կխթանի Մեղրիի տեղական տնտեսությունը, ՖԽՔ մասնակիցներին խմբավորում է երեք հավասար՝ «կողմ», «դեմ», «ԴՊ» խմբերում (տե՛ս գծապատկեր 5): Սակայն այստեղ հետաքրքիրն այլ դիտարկման մեջ է, որ տնտեսության խթանման հարցում առավել լավատես են իգական սեռի ներկայացուցիչները, քան արական. եթե կանանց մեծամասնությունը (59.1%-ը) կողմ է դատողությանը, ապա տղամարդկանց մեծամասնությունը (57.3%-ը) դեմ է, կամ չկողմնորոշված (տե՛ս գծապատկեր 5):



Տարածաշրջանային տարբերություններ

Ազարակ քաղաքի և հարակից գյուղերի բնակիչների ներկայացումներում հաճախ թերահավատություն է ընդգծվում առ տնտեսական անմիջական շահույթը: Նրանք կասկածում են, որ տեղական արտադրանքը կարող է մրցակցել հարևան երկրների ավելի էժան կամ որակյալ ապրանքների հետ: Նրանց համար ցանկացած տնտեսական

օգուտ պետք է ուղեկցվի պետական հստակ ռազմավարությամբ և համայնքի ներգրավմամբ՝ որոշելու, թե ինչ կարելի է արտադրել և շուկա հանել:

«Մենք չպիտի լինենք զիջող ու ուղղակի տարածք տրամադրող մի թույլ պետություն, մենք դրա դիմաց մի բան պետք է ստանանք»:
(Ագարակ, իգական, 18-40 տարեկան)

Մեղրի քաղաքի և հարակից գյուղերի բնակիչները մասնակիցներն ավելի բաց են այն մտքին, որ երթուղիների վերաբացումը կարող է խթանել տեղական առևտուրը, զբոսաշրջությունը, հյուրանոցային բիզնեսը և նույնիսկ մշակութային փոխանակումները: Այնուամենայնիվ, ոչ բոլորն են համոզված: Ոմանք պնդում են, որ չնայած այս հնարավորություններին, բնակիչները կրկին առաջնային են համարում անվտանգությունն ու կայունությունը, քան տնտեսական հնարավորությունները:

Տարբերություններ ըստ սեռի

Կանայք հաճախ շեշտում են, որ թեև կարող են առաջանալ տնտեսական օգուտներ (օրինակ՝ տեղական արտադրանքի ավելի հեշտ վաճառք, զբոսաշրջության զարգացում), նրանց ընտանիքների հոգեբանական հարմարավետությունն ու անվտանգությունն առաջին տեղում են: Նրանք ընդգծում են պետական մակարդակով պլանավորման և հստակ հաղորդակցության անհրաժեշտությունը ցանկացած տնտեսական ներգրավումից առաջ:

«Դե նախ պետք ա էտ ամեն ինչի մասին խոսվի: Մենք էլ ենք լուրեր նայում, քննարկում ենք իրար հետ, բայց եթե կա հստակ ծրագիր ու դա արվելու ա, պետք ա չէ՞ խոսել հասարակության հետ: Առաջին հերթին դա պետք ա լինի: Մարգպետարանի միջոցով, Երևանի մարդիկ գան և այլն: Պետք ա ասեն ոնց ա բացվելու, որտեղով և այլն: Առանց սրանք իմանալու մենք չենք կարա ասենք մարզը կակտիվանա, թե չի ակտիվանա»:
(Ագարակ, իգական, 18-40 տարեկան)

Տղամարդիկ հակված են ավելի շատ կենտրոնանալ մակրոտնտեսական ասպեկտների վրա. տրանսպորտային ծախսերի պոտենցիալ նվազում, տեղական արդյունաբերության համար ավելի էժան մատակարարումներ (օրինակ՝ պղնձամոլիբդենային գործարանը) կամ այգիների մշակության և մրգի արտահանման

բարելավում: Նրանք նշում են, որ եթե այս երթուղիները նվազեցնեն ծախսերը և ստեղծեն շուկաներ, աշխատավարձերը և տեղական հարկային եկամուտները կարող են աճել՝ օգուտ բերելով համայնքի կենսամակարդակը: Այնուամենայնիվ, տղամարդիկ նույնպես կրկնում են անվտանգության սահմանափակումները:

«Եթե ճանապարհը բացվի, ինքնարժեքը կնվազի, շահութաբերությունը կավելանա, պետության շահութահարկը կշատանա... աշխատավարձերն էլ կբարձրանան»: (Ագարակ, արական, 41 և ավելի տարեկան)

Տարբերություններ ըստ տարիքի

Ավելի երիտասարդ մասնակիցները երբեմն հետաքրքրություն են ցուցաբերում նոր տնտեսական հնարավորությունների նկատմամբ, ինչպիսիք են հյուրընկալության ոլորտի զարգացումը կամ ներդրողների ներգրավումը: Այնուամենայնիվ, նրանք նաև անհանգստանում են, որ ցանկացած երկարաժամկետ ներդրում պահանջում է կայունություն և խաղաղություն՝ առանց ապահով միջավայրի և խաղաղության պայմանագրի, ներդրումներն ու նոր ձեռնարկումները չափազանց ռիսկային են թվում: Առավել հասուն և տարեց մասնակիցները հաճախ հիշում են անցյալի փորձառությունները (օրինակ, հարևանների հետ շփումները նախքան հակամարտությունները) և զգույշանում: Նրանք ընդունում են, որ տեսականորեն բարելավված տրանսպորտը կարող է բարեկեցություն բերել և Մեղրին դարձնել առևտրի խաչմերուկ: Սակայն այս ձեռքբերումները ստվերվում են անցյալի լարվածության հիշողություններով և մտավախությամբ, որ տնտեսական բացությունը կարող է ճանապարհի հարթել ժողովրդագրական և մշակութային տեղաշարժերի համար, որոնք անբարենպաստ են տեղի բնակչության համար:

ՔՀԿ և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների հեռանկարները

ՀԿ-ների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների քննարկման ընթացքում գերակայում են անորոշություններն ու մտավախությունները: Թեև նրանք գիտակցում են զբոսաշրջության և առևտրի զարգացման ներուժը (օրինակ՝ մշակութային կենտրոնների հիմնում, տեղական շուկաների ընդլայնում, նոր

ենթակառուցվածքների կառուցում), նրանք կասկածում են՝ արդյոք համայնքը պատրաստ է ընդունել մեծ թվով զբոսաշրջիկների կամ օտարերկրյա գործարարների՝ առանց հստակ սահմանված կարգավորող շրջանակների և անվտանգության երաշխիքներ:

«Է, պատրաստ չի Մեղրին... Մեղրեցին շատ հյուրասեր ա, բայց չմտածելով մարդու դեմ ինչ ա գալիս»:

Բիզնեսի ներկայացուցիչների անդրադարձը

Բիզնեսի ներկայացուցիչներն ընդունում են, որ ավելի էժան, ավելի ուղղակի առևտրային ուղիները կարող են նվազեցնել հումքի, վառելիքի և տրանսպորտի ծախսերը՝ պոտենցիալ բարձրացնելով տեղական շահութաբերությունը: Որպես ծախսարդյունավետ լուծում նրանք նշում են, օրինակ, երկաթուղային տրանսպորտը: Այնուամենայնիվ, նրանք խիստ կասկածներ են հայտնում անվտանգության և վստահության վերաբերյալ. բիզնեսի աճը կարևոր չէ, եթե մարդիկ վախենում են ներթափանցումից կամ եթե համայնքը դատարկվում է անհանգստության պատճառով:

«Որոշակի դրական ազդեցությունը կունենա, եթե մտածենք ապրանքաշրջանառության համար... Բայց անվտանգություն չի լինելու, մարդիկ կլքեն Մեղրին»:

Ամփոփում

Սոցիալ-տնտեսական հնարավորությունների քննարկումը բազմաշերտ է, սա զուտ սոցիալական և/կամ տնտեսական պրակտիկաների մասին չէ, հաճախ այն կենսականության մասին խոսույթ է: Մի կողմից, մասնակիցները գիտակցում են, որ տրանսպորտային ուղիների վերաբացումը կարող է

- ապահովել ավելի ցածր տրանսպորտային ծախսեր,
- բարձրացնել առևտրի ծավալները,
- խթանել զբոսաշրջությունը, հյուրանոցային բիզնեսը և մշակութային փոխանակումները,

- տարածաշրջանի համար պոտենցիալ բարձրացնել աշխատավարձերը և հարկային եկամուտները:

Մյուս կողմից, գրեթե բոլոր դրական տնտեսական հնարավորությունները թուլանում են անվտանգության խորը մտահոգությունների, վստահության պակասի և անորոշության պատճառով: Առանց հստակ խաղաղության պայմանագրի, կայուն կառավարման, վստահելի տեղեկատվության և անվտանգության ուժեղ պայմանավորվածությունների, բնակիչները չեն ցանկանում ընդունել վերաբացված երթուղիների տնտեսական խոստումները: Արդյունքում, մինչդեռ մեծամասնությունը տեսնում է տեսական տնտեսական օգուտներ, գործնական ընդունումը լիովին կախված է հիմքում ընկած աշխարհաքաղաքական և անվտանգության երկրնորանքների լուծումից:

«Անորոշությունը թույլ չի տալիս, որ մարդիկ ներդրումներ անեն... որ խաղաղության պայմանագիր կնքվի, Մեդրին շատ լավ կենտրոն ա դառնալու»:
(Մեդրի, իգական, 18-40 տարեկան)

Միջանձնային փոխհարաբերությունները. հայ-ադրբեջանական համատեքստը

Ընդհանուր վերլուծություն

Տվյալները բացահայտում են խորապես արմատացած թերահավատություն և վախ հայերի և ադրբեջանցիների միջև միջանձնային հարաբերությունների վերականգնման հնարավորության նկատմամբ: Չնայած համակեցության խորհրդային փորձառությանը, վերջին հակամարտությունները, հատկապես 2020 թվականի պատերազմը, սաստկացրել են անվստահությունն ու թշնամանքը: Մասնակիցները հետևողականորեն ընդգծում են անվտանգության մտահոգությունները, անցյալի բռնություններից ստացված տրավմաները և Ադրբեջանում առկա քաղաքական միջավայրը՝ որպես վստահության վերահաստատման առաջնային խոչընդոտներ:

Նրանք հաճախ տարբերակում են հիպոթետիկ երկարաժամկետ ապագաները՝ տասնամյակներ հեռու, որտեղ սերնդափոխությունը և փոփոխված քաղաքական հանգամանքները կարող են թույլ տալ մերձեցում, և ներկա պահը, որը նրանք համարում են չափազանց ծանրաբեռնված ատելությամբ, վախով և չլուծված դժգոհություններով:

«Ես մտածում եմ երբեք մերձեցում հնարավոր չէ... 2020-ից հետո գրեթե անհնար է»: (Ագարակ, կին, 18-40 տարեկան)


«Գուցե դարեր պետք է անցնի»: (Ագարակ, կին, 41 և ավելի տարեկան)

«Դրա մասին նույնիսկ խոսելն ավելորդ է»: (Մեղրի, տղամարդ, 41 և ավելի տարեկան)

Այս պնդումները տիպիկ են, վկայում են լոկալ տրամադրվածությունը, որ ներկայիս պայմանները չեն նպաստում միջանձնային վստահության կամ բարեկամական հարաբերությունների համար:

Իսկապես, եթե սոցիալ-տնտեսական փոխանակության, ենթակառուցվածքային խնդիրների քննարկումը ձևավորում է տարակարծություն՝ հակադրելով շահն ու վտանգը, ապա միջանձնային խնդիրների շուրջ քննարկումներն առավել ֆոկուսավորված են, և մասնակիցները հաճախ համակարծիք են: Մասնավորապես հետաքրքիր են անանուն հարցման պատասխանները: Համաձայն գծապատկեր 6-ի \$ԽԶ մասնակիցների ճնշող մեծամասնությունը՝ 75.0%-ը, շատ վատ է վերաբերվում

տրանսպորտային վերաբացված ուղիներով աղբբեջանցիների հետ փոխգործակցության մտքին: Ընդ որում, ոչ մի մասնակից չի նշել «լավ/շատ լավ» տարբերակը:



ՖԽՔ մասնակիցները հաճախ հիշում են, որ պատմականորեն որոշ աղբբեջանցիներ ապրել են տարածաշրջանում և նույնիսկ ինտեգրվել՝ ընդունելով հայկական ազգանուններ կամ ծառայելով տեղական կառույցներում: Սակայն վերջին պատերազմներն ու կորուստները ստվերել են այս հիշողությունները: Թեև մի քանիսն ասում են, որ ապագա սերունդները կարող են ընդհանուր լեզու գտնել, մեծ մասը մնում է հոռետես: Պետական մակարդակով փոփոխությունների անհրաժեշտությունը, ինչպիսիք են գերիների վերադարձը, տարածքների վերադարձը և աղբբեջանական քաղաքականության փոփոխությունը, հաճախ նշվում է որպես միջանձնային հաշտեցման նախադրյալ:

«Ես չգիտեմ ինչքան ժամանակ պետք է անցնի... եթե ղեկավարությունն [խոսքը աղբբեջանական քաղաքական իշխանության մասին է] իրա հպատակներին չդաստիարակի... ոչ մեկը չի փոխվելու»: (Ազարակ, կին, 41 և ավելի տարեկան)

Մասնակիցները լայնորեն հավատում են, որ մշակութային խոցելիությունը՝ տեղական ավանդույթների կորուստը, օտար տեղանունների ընդունումը և թույլ մշակութային ենթակառուցվածքները, Մեղրին և հարակից տարածքները դարձնում են արտաքին ազդեցության ենթակա: Նրանք մտավախություն ունեն, որ առանց ուժեղ մշակութային ինքնագիտակցության, երթուղիների բացումը և հարևան երկրների հետ շփումը կարող են թուլացնել կամ քայքայել հայկական ավանդույթները:

«Մենք չենք իմանում մեր նախշերը, որոնք են, թուրքական աղբբեջանական տարազները նկարի վրա նկարված... մեր մշակույթը կորում ա»:
(Ագարակ, կին, 41 և ավելի տարեկան)

Սա ընդգծում է, որ մշակութային կայունությունը դիտվում է որպես սահմանափակ, և ցանկացած ուժեղացված տարածաշրջանային փոխազդեցություն կարող է արագացնել մշակութային ձուլումը կամ կորուստը:

Տարբերություններ ըստ սեռի

Կանայք ուժեղ զգացմունքային դիմադրություն են ցուցաբերում հայ-աղբբեջանական շփման նորացմանը: Նրանք շեշտում են պատերազմից ստացված տրավման, ֆիզիկական վնասի վախը և այն գաղափարը, որ ցանկացած փոխազդեցություն կարող է վտանգավոր կամ մանիպուլյատիվ լինել: Նույնիսկ եթե ոմանք հիշում են պատմական համակեցությունը, վերջին բռնությունների ինտենսիվությունը ստիպում է նրանց հավատալ, որ դա այլևս անհնար է:

«Մենք ավելի մտահոգ ենք... քնած տեղը սպանեն, բայց հայերը չեն սերմանել»:
(Ագարակ, կին, 18-40 տարեկան)

Տղամարդիկանց պարագայում, հատկապես ավագ սերնդի վերկայացուցիչների դեպքում, շատ կտրուկ և բացասական են մոտեցումները: Չնայած դրան, նրանք հաճախ են օրինակներ բերում արտասահմանում, օրինակ՝ հայերի և աղբբեջանցիների փոխգործակցությունը Ռուսաստանում, և դիտարկում են տեսական հնարավորությունը, որ տասնամյակների ընթացքում և ղեկավարության և քաղաքականության փոփոխություններից հետո հարաբերությունները կարող են կարգավորվել: Նրանք հակված են խնդիրը շարադրել աշխարհաքաղաքական և պատմական առումներով՝ նշելով, որ առևտուրը կամ արտաքին գործոնները կարող են ի վերջո թուլացնել լարվածությունը:

«Հենց էս պահին հնարավոր չի, բայց երկու սերունդ հետո հնարավոր ա»:
(Ագարակ, տղամարդ, 41 և ավելի տարեկան)

Տարբերություններ ըստ տարիքի

Երիտասարդները, որոնք ապրել են վերջին հակամարտությունները, խորապես ազդվել են, տրավմատիզացվել և թերահավատություն են հայտնում, որ վստահությունը կարող է շուտով վերականգնվել: Թեև նրանք ընդունում են, որ երիտասարդ սերունդները, որոնք անմիջականորեն չեն տուժել պատերազմից, կարող են տարբեր վերաբերմունք դրսևորել, նրանք չեն տեսնում, որ դա տեղի է ունենում իրենց կյանքի ընթացքում:

Առավել հասուն և տարեց ներկայացուցիչները երբեմն նշում են խորհրդային ժամանակաշրջանի համակեցությունը՝ ցույց տալու համար, որ հայերն ու ադրբեջանցիները ժամանակին ապրել են կողք կողքի: Այնուամենայնիվ, նրանք կարծում են, որ վայրագությունների մասշտաբն ու նորությունը, ինչպես նաև Ադրբեջանում զոջման կամ քաղաքական փոփոխությունների բացակայությունը, քայքայել են վստահության ցանկացած հիմքերը: Նրանք նաև կանխատեսում են, որ միայն զանգվածային տեղաշարժերը, որոնք նման են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայի հաշտեցման ջանքերին, կարող են ճանապարհ հարթել դրական փոփոխությունների համար:

ՔՀԿ և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների հեռանկարները

ՔՀԿ-ների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները քննարկման ընթացքում կենտրոնանում էին պետական մակարդակի քաղաքականության և մշակութային հիմքերի ձևավորման անհրաժեշտության վրա՝ որպես նախապայման միջանձնային վստահության ձևավորման, կամ դրա շուրջ գործողությունների իրականացման: Նրանք ընդգծում են, որ առանց անցյալի սխալների պաշտոնական ճանաչման և ատելության քարոզչությունը վերացնելու համատեղ ջանքերի, միջանձնային հարաբերությունները դժվար թե բարելավվեն: Նրանք գտնում են, որ մշակութային և կրթական բարեփոխումները կարող են հնարավորություն տալ ապագա սերունդներին տեսնել միմյանց ոչ թե որպես թշնամիներ, այլ որպես պոտենցիալ գործընկերներ:

Բիզնեսի ներկայացուցիչների անդրադարձը

Բիզնեսի ներկայացուցիչները ընդունում են, որ տնտեսական փոխանակումները մի օր կարող են խթանել սահմանափակ վստահությունը կամ առնվազն խաղաղ գոյակցությունը առևտրային համատեքստերում: Մակայն նրանք նույնպես պնդում են կայուն պայմանների, իրավահավասարության և հայկական տարածքներից օտարերկրյա (ադրբեջանական) զորքերի դուրս գալու մասին՝ նախքան իսկական բարեկամական հարաբերությունների մասին մտածելը: Նրանք ընդգծում են, որ առանց ամուր, արդար շրջանակի, ցանկացած միջանձնային շփում մնում է հղի:

«Քանի սահմանազատումը չի եղել... հարաբերությունների մասին կարա խոսանք»:

Ամփոփում

Վերլուծությունը բացահայտում է հայ-ադրբեջանական միջանձնային հարաբերությունների բարդ ու բազմաշերտ ասպեկտները: ՖԽՔ մասնակիցների ճնշող մեծամասնությունը մերժում են վստահության և սերտ փոխգործակցության գաղափարը՝ վկայակոչելով *վախը, տրավման և թշնամությունը*: Միևնույն ժամանակ, նրանք ընդունում են, որ պետական մակարդակով փոփոխությունները, սերնդափոխությունը և միջազգային երաշխիքները կարող են երկարաժամկետ հեռանկարում մեղմացնել վերաբերմունքը:

